բանի է պարապել, որ և շնորհեաց իսկ զաւրինակս» (*)։

Հաղբատի ձեռագրական ժողովածուի կամ մատենադարանի մասին խօսք կայ դեռ ևս Յովհաննէս Սարկաւագ վարդապետի ժամանակից (**)․ անշո՛ւշտ, այստեղ պահւում էին նաև տեղական վարդապետների աշխատութիւններն ու գրիչների արտագրութիւնները, ինչպէս և վերևը ակնարկներ տեսանք։ Կարինեան ցուցակի N 1535-ի համաձայն գրուած է եղել մի շարական «ի մագաղաթի ի վանս Հաղբատայ ի հայրապետութեան Պետրոսի Ա․ Գետադարձ կաթուղիկոսի ի Յովհաննէս գրչէ ի թուին Հայոց ՆԿԸ» (= 1019) (***)։ Հաղբատումն է գրուած Յովհաննէս Սարկաւագ վարդապետի «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» աշխատութիւնը, խոշոր և ընտիր արևելեան բոլորգրով, ոչ ուշ քան ԺԳ․ դարի առաջին կէսը (****)։ Յովհաննէս Ա․ ՈՀ (= 1221) թուին մի արձանագրութեան մէջ ամփոփելով իւր երկարամեայ գործունէութիւնը, յիշում է և մատեաններ ձեռք բերելու մասին (*****)․ գրքերի նուիրատուութիւններ կան Հաղբատի արձանագրութիւնների մէջ նրանից առաջ և յետոյ, նաև գրատան յիշատակութիւն 1179 թուականին և յետոյ (******)․ բացի գրքերից գրատան անունով նուիրատուութիւններ են լինում և կալուածներով․ Համազասպայ որդի Արամը կրօնաւորում է և «ետու զիմ հայրենիք այգին՝ որ առաջի է Կղաձորոյ ի գրատունս Հաղբատայ»․ Վահրամ Կուլոզեանց միաբանում է և «ետու զիմ գնած այգին որ ի Բերդիկ է ի գրատունս իմ հոգոյս պաշար»․ յայտնի է Լևոն Գ-ի ուղարկած նուէրը Հաղբատին՝ Ներսէս Լամբրոնացու Սաղմոսաց մեկնութիւնն՝ ընդարձակ յիշատակարանով, ուր Լևոնի համար ասուած է, թէ Մեծ Հայքի վանքերը «միշտ զովէր և տենչէր (?!) իբրև հարազատ ժառանգ, և մանաւանդ քան զբազում տեղիս զմեծ և զհռչակաւոր երկնահաւասար սուրբ ուխտն զմայրավանքն Հաղբատ» (*)։ ԺԳ․ դարի երկրորդ կիսում այնքան էր ընդարձակուած վանքի գրատունը, որ Յովհաննէս Դ․ Դափեան ստիպուած էր յատուկ շէնք շինել (**)։

Հաղբատի անունը մեծ էր նաև իբրև գրչութեան դպրոցի, և այդ հասկանալի է․ մի տեղ, որ այնքան ստեղծագործական կեանք կար, վարդապետների և աշակերտների բազմութիւն, պէտք է ծաղկէր և գրչութեան արուեստը։ Արդէն խօսք եղաւ մի քանի գրիչների և սրբագրողների մասին․ բայց ձեռագիրների մէջ չեն պակասում նորա հռչակի ուրիշ ապացոյցներ։ Սարկաւագ վարդապետի համար յիշւում է, թէ «զՍաղմոսն բազում ճգամբ ի թարգմանչացն սաղմոսարանէ գաղափարեաց», ԺԳ․ դարի առաջին տասնամեակներում Յովհաննէս Գառնեցին հանդիպել է Հաղբատում և ամենայն ճշդութեամբ ընդօրինակել նորա պատրաստած օրինակից (***)։ Գլաձորի դպրոցի նշանաւոր տեսուչը՝ Եսայի Նչեցին՝ Դիոնեսիոս Արիսպագացու ձեռագիրը ընդօրինակել է տալիս Յովհաննէս Հռոմայրեցու ձեռքով «ի ստոյգ եւ յընտիր աւրինակէ ի հռչակաւոր ուխտէն Հաղբատայ» (****)։ Յովհաննէս արեղան ՉԾԴ = 1305 թուին «ի գաւառիս Խաղտեաց ի հռչակաւոր մենաստանս, որ կոչի Բերդակն, ընդ հովանեաւ հրաշազարդ և գեղեցկաշէն տաճարի, որ յանուն սրբուհոյ Աճածնին եւ սբ․ Լուսաւորչին Գրիգորի Հայաստանեաց» թողել է ընտիր, բոլորգիր գրչութեամբ մի կէս Աստուածաշունչ, «ի ստոյգ և ընտիր աւրինակէ, որ կոչի Բագնայրեցի, զոր սբ․ վարդապետին Յովսէփայ գտեալ թարգմանչայն գրած ի մայրաքաղաքն Հաղբատ» (*****)։ «Թարգման-

(*) *Ձեռ․ էջմ․* N 2604․ 186 *ա․։ Ձենք յիշում նորա ընդարձակ գործունէութիւնն առ հասարակ, ներկայ աշխատութեան շրջանից դուրս լինելով։*

(**) *Ձեռ․ էջմ․* N 2680․ 579 *ա․ «Հանդէս բանի վասն երանեալ առնն Աճյ Սարկաւագին կենաց և մահուն եւ այլոց հուպ յայն ժամանակս»։*

(***) *Ներսէս Տ․ Միքայէլեան ժխտում է այդպիսի շարականի գոյութիւնն էջմիածնում։*

(****) *Մեր Քարտէզ հայ հնագրութեան* § 112։

(*****) *Երզնկեան․ Հնախօս․* 24։

(******) *Ջալալ․ Ա․* 61, 62, 70, 72․ *Երզնկեան․* 30, 34, 35, 45, 49։

(*) *Արարատ․* 1878, 98։ *Տես և Սամուէլ Անեցի, էջմ․ հրատ․ յաւելուածների մէջ․ եր․* 240։

(**) *Երզնկեան․* 44, 47։

(***) *Ձեռ․ էջմ․* N 4037։ *Ալիշան․ Հայապատում․* 460։

(****) *Ձեռ․ էջմ․* N 60|167։

(*****) *Ձեռ․ էջմ․* N 920 *նժ․։*